ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԸ ՈՐՊԵՍ ՓԻԼԻՍՈՓԱ

Փիլիսոփ. գիտ. դոկտոր Գ. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գրիգոր Մագիստրոսը (կամ Պահլավունին, Բշնեցին) հայ միջնադարի այն բացառիկ անձերից է, որոնք հիշվում են որպես գիտնական-մտավորական՝ միաժամանակ չլինելով հոգևորական ու չպատկանելով հոգևոր դասին։ Նա իշխանական ծագում ուներ, Պահլավունի տոհմից էր, որը մեծ դեր է խաղացել Անիի Բագրատունիների հարստության ժամանակաշրջանում թե՛ քաղաքական, թե՛ մշակութային առումներով։

Գրիգորը ծնվել է 990 թ. և ապրել է մոտ 68—69 տարի։ Նրա մանկությունն անցել է Անիում, ուր նա, որպես Պահլավունիների ժառանգ, շփվել է ժամանակի բարձրաստիճան ազնվականության և թագավորական տանը մոտ կանգնած նշանավոր անձանց հետ։ Մեզ սուղ տեղեկություններ են հասել մանուկ Գրիգորի դաստիարակության մասին։ Ստույգ հայտնի չէ, թե նա որտեղ և ում մոտ է սովորել, թեև կան հիշատակումներ (մասնավորապես իր նամակներում), որ նրա կրթությամբ շատ են մտահոգվել հարազատները, հատկապես հռչակավոր հորեղբայրը՝ Անիի թագավորության վերջին տասնամյակների սպարապետ Վահրամ Պահլավունին[1]։

Չնայած նրա կրթության տեղի և ուսուցիչների վերաբերյալ փաստեր չկան, բայց և այնպես Գրիգոր Մագիստրոսի գրական ժառանգությունը վկայում է, որ նա հիմնավոր կրթություն է ստացել։ Իր աշակերտներ Բարսեղին և Եղիսեին հասցեագրած նամակում Մագիստրոսը գրում է, որ ինքը Պորփյուրի «Ներածությունը» և Ստագիրացու «Կատեգորիաները» ուսումնասիրել է, երբ դեռ «տակաւին պատանեակ» էր (էջ 106)։ Անշուշտ, նա իմացել է լեզուներ, համենայն դեպս անպայմանորեն տիրապետել է հունարենին և ասորերենին, օգտվել է այդ լեզուներով գրված աղբյուրներից ու նույնիսկ թարգմանություններ է կատարել։ Ինքը գրել է, թե «ոչ եմք երբէք դադարեալ ի թարգմանութենէ ևս. բազում մատեանս, զորս ոչ եմք գտեալ ի մեր լեզուս՝ զերկուս մատեանսն Պղատոնի, զՏիմէոսի տրամաբանութեանն և զՓեդովնի, յորս բոլոր ճառսն նախագիտականին այն պարփակեալ կայ, և զայլս բազումս յիմաստասիրացն.— և զերկրաչափականն զԵւկլիդոսին սկսայ թարգմանել. և եթէ տակաւին կամեսցի Տէր երկարանալ մեզ ի կենցաղումս, բազում հոգոյանձին կալեալ զմնացեալսն բոլոր՝ Յունաց և Ասորւոց թարգմանել ոչ դանդաղեցայց» (էջ 66։ Ընդգծումներն այստեղ և ամենուրեք մերն են—Գ. Գ.)։

Գրիգոր Պահլավունու նամակներից անսպառ չափով հորդում է հունահելլենիստական աշխարհի մշակույթի ու գիտության իմացությունը։ Նա շատ լավ գիտեր հունական առասպելները և բազմիցս դիմել է դրանց։ Պահլավունու նամակներում հիշատակվում են անտիկ մշակույթի շատ անվանի ներկայացուցիչներ՝ Արիստոտել, Պլատոն, Սոկրատ, Էպիկուր, Պարմենիդես, Պյութագորաս, Հիպոկրատ, Գալեն, Պորփյուր, Փիլոն, Օլիմպիոդորոս և ուրիշներ։ Շատերին ոչ միայն հիշատակում է, այլ տարբեր առիթներով վկայա-

---

1 Տե՛ս «Գրիգոր Մագիստրոսի Թղթերը», Ալեքսանդրապոլ, 1910, նամակ ԺԱ (այսուհետև այս գրքից բերված քաղվածքների էջերը կնշենք տողամիջում)։

կոչում նրանց մտքերը՝ հաստատելու կամ ժխտելու համար որևէ գիտական հարցադրում կամ դրույթ։ Այս ամենը ցույց է տալիս, որ նա խոր ու հանրագիտական իմացության տեր մտավորական է եղել։ Պատահական չէ, որ նա որպես այդպիսին համբավ է վայելել իր ժամանակակիցների շրջանում։ Գրիգոր Պահլավունին ամենագիտակ մարդ է համարվել ինչպես «արտաքին» գիտությունների, այնպես էլ աստվածաբանության բնագավառում։

Սակայն տվյալ դեպքում էականը ոչ այնքան Մագիստրոսի գիտելիքներն են, որքան այն վերաբերմունքն ու հետաքրքրությունը, որ նա ցուցաբերում էր հունա-հելլենիստական մշակույթի և առհասարակ գիտելիքի ու գիտության նկատմամբ։ Էականն այն է, որ այդ վերաբերմունքն ու հետաքրքրասիրությունը հասարակական նոր մտայնություն ու մթնոլորտ էին ստեղծում։ Այս խնդրում Մագիստրոսին առաջնակարգ դեր է պատկանում։ Բանն այն է, որ նա իր «Թղթերը», որոնցում դրսևորվել են գիտական, ոչ աստվածաբանական գիտելիքների նկատմամբ նրա իմացությունն ու վերաբերմունքը, հասցեագրել է իր ժամանակի բազմաթիվ գործիչների։ Նրանց մեջ են ժամանակի ինչպես աշխարհիկ, այնպես էլ եկեղեցական անվանի գործիչներ, կան նաև երկրորդական դեմքեր ու աշակերտներ։ Մագիստրոսի «Թղթերի» հրատարակիչ Կոստանյանցը գրքի վերջում բերում է անուններն այն մոտ 40 անձանց, որոնց Մագիստրոսը նամակներ է հղել (էջ 281—282)։

Զարգացած ֆեոդալիզմի շրջանի հայ փիլիսոփայության բովանդակության մի զգալի մասը հունա-հելլենիստական մտքի արժեքների պահպանումը, զարգացումը և մասսայականացումն էր մտավոր-կուլտուրական օջախներում։ Աշխարհիկ բնույթի գիտելիքների գովքն ու պրոպագանդան X—XIII դդ. մտքի պատմության մեջ հիմնականում սկիզբ է առնում Մագիստրոսից, որի մեծագույն ծառայությունը պետք է տեսնել հենց նրանում, որ նա ուսուցման մեջ մեծ տեղ տվեց փիլիսոփայությանն ու գիտությանը՝ դրանով իսկ ճանապարհ հարթելով կրոնից համեմատաբար անկախ, նրանից ազատագրված գիտելիքների զարգացման համար։ Այս իմաստով Մագիստրոսն առհասարակ մի տեսակ կամուրջ է, որով անցում է կատարվում վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանի գիտական-փիլիսոփայական մտքից դեպի զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանի միտքը։ Նա ընդգծված հարգանքով է խոսում հայ անցյալի մեծ մտածողների՝ հատկապես Դավիթ Անհաղթի և Անանիա Շիրակացու մասին։ Նրա նամակներում բաղմիցս կարելի է հանդիպել տողերի, որոնց մեջ միտքն արտահայտվում է նույն բառակապակցություններով, ինչ Շիրակացու, Անհաղթի մոտ է։ Պետրոս Գետադարձ կաթողիկոսին գրած նամակում նա գոհունակությամբ է ընդունում այն փաստը, որ ձեռնարկվել է Անանիա Շիրակացու աշխատությունների հավաքման ու բազմացման գործը, դժգոհելով, միաժամանակ, որ Շիրակացու գործերը «նախքան զքեզ (Պետրոս կաթողիկոսը—Գ. Գ.) խրթնացեալ և թագնի ընդ գրուանաւ ծածկէին» (էջ 8)։

Նշանակալից են Մագիստրոսի ջանքերը հայ իրականության մեջ ուսումն ու գիտությունը տարածելու ուղղությամբ։ Կուլտուր-լուսավորական նրա գործունեությունը ներառնում է իր մեջ ինչպես անձնական օրինակը, որի ընթացքում նա չէր խնայում իր ժամանակն ու դրամական միջոցները, այնպես էլ ուրիշներին այդ գործի մեջ ներքաշելու ակտիվ փորձերը։ Հայտնի է, որ նրա նախաձեռնությամբ և օժանդակությամբ Հայաստանի մի շարք վայրերում՝ Բջնիում, Կեչառիսում, Գառնիում և այլուր կառուցվել կամ վերականգ-

նրվել են վանքեր ու եկեղեցիներ ու դրանց կից հիմնվել դպրոցներ։ Բացի այս, հենց Մագիստրոսի նամակներից իմանում ենք, որ նա աշակերտներ է ունեցել երկրի այս ու այն նշանավոր կենտրոններում, որոնց նկատմամբ մեկենասի դեր է կատարել, հետաքրքրվել է նրանց ուսման ընթացքով ու նույնիսկ միջամտել ուսման ծրագրերը կազմելու և գիտելիքներ ձեռք բերելու հերթականությունը սահմանելու գործին։ Մագիստրոսի նամակներից իմանում ենք նաև, որ նա հայ իշխանների, ժամանակի աղդեցիկ մարդկանց հորդորել է դիմել լուսավորությանը նպաստող քայլերի ու միջոցներ չխնայել դրա համար։ Այս մասին է վկայում, օրինակ, նրա նամակը ուղղված Վանանդի Գագիկ թագավորին, որին հանձնարարելով Գրիգոր Հնձացի գիտնական կրոնավորին, գրում է. «Եւ կամիմ, զի և դա արքունիս քուոյ (=քոյոյ) քարգոնոսական (=արքայական) ապարանի առկայացեալ արասցէ ճեմարան, զի մի բնաւին Ասքանազեան և Արամեան դպրութիւնս, ի բազմաց սատարեալ, ի մոռացումըն անկցի» (էջ 97)։

Մագիստրոսն աշխատել է երկրում բարձրացնել գիտուն, իմաստասեր մարդկանց հեղինակությունը, արժեքն ու անհրաժեշտությունը հասարակական կյանքում, այդ մարդկանց շուրջը ստեղծել հարգանքի մթնոլորտ, անել ամեն բան, որ նրանց գիտելիքները չմնան անձնական սեփականություն։ Գագիկ թագավորին գրած վերոհիշյալ նամակում, նկատի ունենալով Գագիկի ջանքերը լուսավորության տարածմանը նպաստելու հարցում, մեծարում է նրան և համեմատում Պտղոմեոսի հետ[2]։ Վկայակոչելով Պլատոնին, նա գրում է. «Ասէ և զայսոսիկ հրաշալին Պղատոն, եթէ զիմաստասէրսն պատուել զաշխարհս մատակարարէ» (էջ 97)։ Մագիստրոսը դժգոհում է այն բանից, որ շատ կրոնավորներ թողած կյանքը, աշխարհիկ հոգսերն ու պահանջները՝ առանձնանում են ու նվիրվում անօգուտ խնդիրների։ Սուր ծաղրի է ենթարկում նման հոգևորականներին, որոնց դեմ, իբր, բողոքի նամակ են գրել անտառի գազանները, թե ինչու՞ եկել են նրանք անտառները և «զմեզ ի մերոյ սեփականէ արտաքս հանեն» (էջ 91)։

Գիտելիքներ ձեռք բերելու գործը դպրոցներում հեշտացնելու և այդ գործին նպաստելու համար Մագիստրոսը կազմում է Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ քերականի» աշխատության մեկնությունների մի ձեռնարկ, որը հաջորդաբար պարունակում էր Դավիթ փիլիսոփայի, Մովսես Քերթողի, Անանունի և Ստեփանոս Սյունեցու մեկնությունները։ Նա որոշ տեղերում տվել էր նաև իր հավելումները՝ նյութի յուրացումը հեշտացնելու նպատակով։ Մագիստրոսի կազմած այդ ձեռնարկը մոտ երեք դար, մինչև Հովհաննես Երզնկացի Պլուզի կողմից նոր ձեռնարկի ստեղծումը, մեծ հեղինակություն էր վայելում և հանդիսանում էր Դիոնիսիոսի «Քերականության» ուսումնասիրության հիմնական աղբյուրներից մեկը։

Գրիգոր Մագիստրոսը ակտիվորեն մասնակցել է ժամանակի հայ ազգային-քաղաքական կյանքին։ Նա հանդիսացել է, ինչպես ընդունված է ասել, Անիի թագավորության վերջին շրջանի ամենաականավոր գործիչներից մեկը։ Կարծիք է հայտնվել այն մասին, թե Մագիստրոսի քաղաքական գործունեությունն ընթացել է երկու շրջանով։ Սկզբում հորեղբոր՝ սպարապետ Վահրամ Պահլավունու հետ, զենքը ձեռքին պայքարել է Հայաստանում բյուզանդական

2 Գագիկի մասին պատմիչ Մատթեոս Ուռհայեցին գրում է. «Այր իմաստասէր և լցեալ ամենայն շնորհօքն փիլիսոփայականացն և հռետորական արուեստիւքն» («Մատթեոսի Ուռհայեցւոյ ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898, էջ 189)։

տիրապետությունը հաստատելու դեմ, հետո, Պետրոս Գետադարձ կաթողիկոսի ազդեցությամբ, հարել է բյուզանդամոլների թևին և փորձել օգնել նրանց Անին Բյուզանդիային հանձնելու խնդրում։ Այս տեսակետի պաշտպանները Մագիստրոսի բյուզանդական ծառայության անցնելու հանգամանքը դիտում են որպես նրա համոզմունքների ու գործունեության տրամաբանական շարունակություն։ Մենք մտածում ենք, որ սխալ է այս տեսակետը։ Իրավացի է պատմաբան Հ. Հարությունյանը, ըստ որի Մագիստրոսը «իր քաղաքականությամբ միշտ հետևել է իր հորեղբոր (Վահրամ Պահլավունու—Գ. Գ.) քաղաքական կուրսին»[3]։ Ինչ վերաբերում է բյուզանդական կողմնորոշմանը, ապա նա պարզապես հետևել է Անիի վերջին թագավոր Գագիկ II-ին, որը, բյուզանդական Մոնոմախ (1042—1054 թթ.) կայսեր խաբեության զոհ դառնալով, գտնվում էր Պոլսում և երկար դիմադրում էր իր թագավորությունը կամավոր Բյուզանդիային հանձնելու պահանջին։ Ի վերջո, ելք չգտնելով, նա զիջեց՝ փոխարենը կայսրությունից ստանալով այլ հողեր։ Մագիստրոսը, որը նույնպես գտնվում էր Պոլսում, հետևում է թագավորի օրինակին և իր հայրենի հողերի դիմաց կալվածներ է ստանում Միջագետքի սահմանների մոտ, իսկ հետագայում միայն նշանակվում Վասպուրականի, Բերկրիի, Արճեշի, Տարոնի, Մանազկերտի ու Հյուսիսային Միջագետքի դուքս, հրամանատար-կուսակալ։ Արժանահավատ պետք է համարել այս մասին Արիստակես Լաստիվերտցու վկայությունը, ըստ որի՝ «Իբրև ետես եթէ ոչ են թողլոյ զԳագիկ ի տեղի իւր, լառաջ կացեալ տայ զբանալին Բջնոյ զթագաւորն, և զամենայն զիւր հայրենի ժառանգութիւնն. և մեծարեալ ի նմանէ՝ առնու պատիւ մագիստրոսութեան, և զտեղիս բնակութեան ի սահմանս Միջագետաց գեօղս և քաղաքս, գրով և ոսկի մատանեաւ յազգէ յազգ մինչև յաւիտեան»[4]։

Գ. Մագիստրոսի նամակներից կարելի է եզրակացնել, որ նա շատ գործունյա կառավարիչ է եղել և իրեն հանձնված մարզերում բավականաչափ բարեգործություններ է կատարել, բայց, մեծ հակում ունենալով դեպի գիտությունները, միշտ ձգտել է ազատվել վարչական պարտականություններից՝ ամբողջովին գիտությանն ու գրականությանը նվիրվելու համար։ Բյուզանդական կառավարչի իր բարձր պաշտոնն իրականացնելու շրջանում Մագիստրոսը հայտնի է դառնում որպես թոնդրակյան շարժումը ճնշող գործիչ. նա, անցած բյուզանդական զորքերի գլուխ, հայտնաբերում է թոնդրակեցիների կենտրոններն ու ավերում դրանք։ Թոնդրակեցիները կամ ոչնչացվում են կամ աքսորվում։ Մագիստրոսի ձեռքով մահացու հարված է հասցվում այդ շարժմանը։ Այս հանգամանքը Մագիստրոսին բնութագրում է որպես տիրապետող ֆեոդալական դասակարգի շահերի ակտիվ պաշտպանի։

* * *

Գրիգոր Մագիստրոսի աշխարհայացքում խաղաղորեն գոյակցում են երկու իրար հակադիր ու իրարամերժ տենդենցներ։ Մի կողմից, որպես իր դարի զավակ, նա բարձր է դասում հավատը, աստվածաբանական սկզբունքները, իսկ մյուս կողմից, պահանջ է առաջադրում լուրջ ուշադրություն հատկացնել «բնաբանական» գիտելիքներին, իմանալ ու լայն չափով ուսուցման առարկա դարձնել անտիկ աշխարհի գիտությունն ու փիլիսոփայությունը և առհասարակ գիտական գիտելիքները, որոնք, ինչպես հայտնի է, չեն համա-

---

3 Հ. Հարությունյան, Հայաստանը IX—XI դարերում, Երևան, 1959, էջ 283։

4 «Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ», Թիֆլիս, 1912, էջ 61։

տեղվում քրիստոնեական կրոնի շրջանակներում։ Մագիստրոսից մեզ հասած ողջ գրական ժառանգության մեջ, դլխավորապես նրա նամակներում, իսը համակրանք է արտահայտվում ճշմարիտ գիտության, ոչ աստվածաբանական «արտաքին» գիտելիքների նկատմամբ։ Մարդկային գիտելիքների գանձարանում, ըստ նրա, «արտաքին» գիտելիքները հանդիսանում են իմացության անհրաժեշտ, կարևոր ու բարձր գնահատականի արժանի մասը։ Այս առումով պատահական չէ այն հանգամանքը, որ նա, երաշխավորելով Գրիգոր Հնձացի գիտնական-կրոնավորին Վանանդի թագավոր Աբասյան Գագիկին, որպես Գրիգորի գիտնականությունը դրականորեն բնութագրող հատկանիշ է նշում նրա՝ «արտաքին գրոց յոյժ տեղեակ» լինելը (էջ 97)։

Սակայն միջնադարյան մտավորականն ինքն անձամբ չի նկատում հակասությունը գիտելիքների այդ երկու բնագավառների՝ «բնաբանականի» ու աստվածաբանականի միջև։ Ավելին, նա մտածում էր, որ «բնաբանական» գիտելիքները օգնում են հավատի ամրապնդման գործին։ Կոչ անելով ուսումնասիրել ու գիտենալ հունա-հելլենիստական աշխարհի գիտությունն ու փիլիսոփայությունը և հայ անցյալի իրականության մեջ դրա լավագույն կրողների՝ Դավիթ Անհաղթի և Անանիա Շիրակացու ուսմունքը, Մագիստրոսը դրանով հակասություններ է բերում քրիստոնեական-աստվածաբանական գաղափարախոսության ոլորտը։ Նրա մոտ չկա ճշմարտության երկակիության ըմբռնումը, և նա դեռ չէր տեսնում, որ «բնաբանական» գիտելիքները տրամաբանորեն անհամատեղելի են կրոնական դոգմաների հետ։ Այս հանգամանքը բնորոշ է ոչ միայն Մագիստրոսին, այլև X—XIII դդ. հայ մյուս մտածողներին։

Ասածներից, իհարկե, չի հետևում, թե Գրիգոր Մագիստրոսը միատեսակ վերաբերմունք էր ցուցաբերում հին աշխարհի գիտության ու փիլիսոփայության բոլոր ներկայացուցիչների նկատմամբ և նրանց ուսմունքներին տալիս էր միևնույն գնահատականը։ Առավել չափով նրան հրապուրել է Պլատոնը, որի իդեալիզմը մոտ է եղել իր աշխարհըմբռնմանը։ Պլատոնի անունը նա հիշում է ոչ այլ կերպ, քան՝ «հրաշալին Պլատոն» (էջ 83, 97, 115 ևն)։ Մինչդեռ կինիկյան դպրոցի և նրա ուսմունքի մասին գրում է ներքին հակակրանքի զգացումով՝ «զշնական իմաստասէրսն եռապատուեան յորջորջմամբ սահմանեն, նախ, զի որպէս շունք զգաստագոյնք են և պահապան գանձուց, այսպէս և նոքա իմաստասիրութեանն և օրինացն աւանդութեանն. որպէս շունք զտէրս սիրեն և ընդ բարեկամսն ոչ յաշաղեն, այսպէս և նոքա վարդապետաց իւրեանց և առ ընկերսն ողջախոհ և միամիտք. և որպէս շունք զօտարսն հալածեն և թէպէտև համասեռիցն հանդիպին՝ ոչ նոցա դիւրաւ ծանօթանան, այսպէս և նոքա օտարոտի ձայնի ոչ անսան և զաւանդութիւն իւրեանց ոչ մոռացեալ լինին» (էջ 29)։

Բնական է, որ Մագիստրոսը բացարձակապես ժխտողական գիրք է բռնում էպիկուրյան ուսմունքի նկատմամբ։ Երբ խոսում է թոնգրակեցիների՝ իր սոցիալ-դասակարգային ու գաղափարական հակառակորդների հայացքների մասին, ապա որպես դրանք վարկաբեկող հատկանիշ նշում է էպիկուրյան անաստվածությամբ ներծծված լինելը։ Նման վերաբերմունքը, հասկանալի է, պայմանավորված է Մագիստրոսի աշխարհայացքի բնույթով, որն իդեալիստական է իր բուն էությամբ։

Փիլիսոփայության հիմնական հարցը Գրիգոր Մագիստրոսը լուծում էր իդեալիստորեն և, որպես դարի զավակ, քրիստոնեական-կրոնական ըմբռնման

ոգով։ Նրա համար աստված անսկիզբ ու անվախճան է, սուբստանցիոնալ էություն է, որից սկիզբ է առնում ողջ գոյություն ունեցողը։ Դա, ըստ նրա, անառարկելի ու անքննելի ճշմարտություն է։ «Եւ պարտ պատշաճ է,—գրում է նա,— ըստ մերումս փանաքիմաց մտածութեանց, որքան կայողութիւն է՝ պարդարել զաշխարհ և օգնական լինել իբրև զծառայ հլու և հպատակ Ստեղծչին զսա։ Եւ որք արտաքոյ այսմ խոկան՝ հարստահարութիւն Արարչին ընդդէմ տրամախոհեն» (էջ 85)։

Մագիստրոսը քաջ գիտեր աստվածապաշտության բազմաղան ձևերի ու եղանակների մասին։ Նամակներում նա բազմիցս դրսևորել է իր գիտելիքներն այդ ասպարեզում։ Բազմաստվածությունը նա մոլություն էր համարում։ Որպես հավատացյալ քրիստոնյա, նա, անշուշտ, այլ տեսակետի չէր էլ կարող լինել։ Սակայն հետաքրքրական է այն, որ նա գտնում էր, թե մարդկային միտքը ապրել է ճշմարիտ աստծո որոնման պրոցես։ Նկատի ունենալով, որ ճշմարիտ աստվածության ճանաչումը պրոցես է եղել, նա շեմքից չի մերժում աստվածապաշտության նախկին ձևերը և հատկապես հունահելլենիստական աշխարհի նշանավոր ներկայացուցիչների հավատը, այլ նրանցից ոմանց մոտ (օրինակ՝ Պլատոնի) տեսնում է աստծո մասին ճշմարիտ ուսմունքի դրույթներ։ Նա մտածում էր, թե ընդհանուր առմամբ նախաքրիստոնեական կրոններում «կաթիլ իմն աստուածային կաթեալ էր առ նոսա» (էջ 183)։ Ոմն Իբրահիմ ամիրային հասցեագրած նամակում, նա ոչ քրիստոնեական կրոնների ընդհանուր արատը համարում է այն, որ «սոքա ոչ միութիւն Աստուծոյ ծանեան և ոչ երրորդութիւն» (էջ 183), և այն, որ նրանք առաջադրում են մարմնականի, նյութականի պաշտամունքը, մինչդեռ ճշմարիտ աստված ոգեղեն է, որին, այդ պատճառով, հասու կարելի է լինել ներքին էությամբ, «իմանալի զօրութեամբ»։

Աստված, ըստ Մագիստրոսի, չունի «ոչ պատկեր, և ոչ ձև, և ոչ քանակութիւն, և ոչ չափաբերութիւն, և ոչ նիւթ, և ոչ տեսակ, ոչ մարմին, և ոչ գոյութիւն կամ անգոյութիւն, ոչ սկիզբն, ոչ միջութիւն, ոչ կատարումն, ոչ ժամանակ» (էջ 176)։ Առարկություն չհանդուրժող ոճով նա նույնիսկ պնդում է, որ «եթէ իմասցի՝ ուրեմն ոչ է աստուած», այսինքն՝ եթե փորձ է արվում տալ նրան որոշակի «ձև կամ պատկեր, կամ ժամանակ, կամ որպիսութիւն», ապա այդ մեղանչում է աստծո հանդեպ։ Նույնիսկ «եթէ մարգարէիցն ոք յանպրգնիցի բերել վկայութիւնս, եթէ ոմն այսպէս ետես — ոմն այնպէս՝ այնոքիկ ոչ ճշմարտութիւն» (էջ 176)։ Այստեղ դարձյալ աստծո մագիստրոսյան ըմբռնումը հիշեցնում է փիլոնյան լոգոսին։

Աստծո էության վերը բերված բնութագրումները տրամաբանական հակասություն են երևան բերում այս հարցում միջնադարյան մտավորականի հայացքների մեջ։ Եթե աստծո էությունը բնորոշման ենթակա չէ և հնարավոր չէ տալ նրա սահմանումը, ապա ինչպե՞ս կարելի է խոսել քրիստոնեական կրոնի ճշմարտացիության մասին մյուս կրոնների, աստվածապաշտական այլ ուսմունքների համեմատ։ Եթե աստված բնութագրելի չէ, ապա, այս հիմունքով, նույնքան ճշմարտացի են նաև կրոնի մյուս ձևերը։ Սակայն Մագիստրոսը չի տեսնում այդ հակասությունը։ Նա քննադատում ու մերժում է հավատի այլ ուսմունքները՝ «բացահայտելով» նրանցում արտահայտված առանձին դրույթների սխալները, միաժամանակ նշելով, որ հավատի այլ ուսմունքներ ինքը ժխտում է ծանոթանալով և կարդալով դրանց մասին եղած գրականությունը։ «Այլ մեղ այսոքիկ ոչ հաւատացեալ եղիցի, այլ ընթերցեալք, զի

մի պարսաւեցեն զմեզ հեթանոսաց իմաստունքն, եթէ ոչ եմք տեղեակ անվաւերական նոցայն մատենագրութեանն»,— գրում է Մագիստրոսը (էջ 179)։ Խոսելով իր հավատի մասին, նա շարունակում է. «Սակայն մեզ հաւատացեալ լիցի միայն Մովսէսին աստուածեղէն պատգամս, զոր ի Սինականն ընկալաւ լերինն Աստուծոյ ղէմ յանդիման, ոչ աղճատանս և ցնդեալն, այլ պարզ, մաքուր և լուսաւոր օրինադրութիւնս, և դրեալ բանիւ Աստուծոյ, և ոչ յորովայն ձկան որպէս Բիւռոսին կամ սանդարամետականին էպիկուրեանց անաստուածիցն կամ արեգական Զրադաշտին կամ սլիթագորականացն, որք ի քառից զբոլոր բաղկացութիւնս ասեն լինել կամ ի Սմոնեանցն, որ երկուս հաւանին արարիչս՝ զմիսն բարւոյ և զմիսն չարի» (էջ 179—180)։

Մենք արդեն ասել ենք, որ հանձին Մագիստրոսի XI դարը հրապարակ է հանել խոր և լայն գիտելիքներ ունեցող մի մտավորականի, որը գործնական քայլերի էր դիմում դրանց մասսայականացման համար, բայց միաժամանակ այդ մտավորականը պահանջում էր անաղարտ պահել քրիստոնեական կրոնի դոգմաները և ինքը գրչով ու սրով պայքարում էր դրա համար։ Հիշենք այստեղ նրա պայքարը թոնդրակեցիների դեմ, որը, անշուշտ, առաջին հերթին թելադրված լինելով սոցիալ-դասակարգային մոտիվներով, բխում էր նաև նրա համոզմունքներից։

Այսուամենայնիվ, Մագիստրոս քրիստոնյայի, քրիստոնեական աստվածաբանության պաշտպանի մեջ ապրում է բնական գիտությունները, ոչ աստվածաբանական գիտելիքները բարձր դասող ու նրանց զարգացմամբ շահագրգռված մի խորիմաց մտավորական։ Այդ մտավորականն է, որն առաջադրում է փիլիսոփայական-բնագիտական իմացություն ձեռք բերելու ուղիներն ու եղանակները, սահմանում է այդ ասպարեզում գիտելիքներ ստանալու հաջորդականությունը։ Ըստ Մագիստրոսի, փիլիսոփայական-բնագիտական գիտելիքների ուսուցումը պետք է սկսել սովորելով քառյակ առարկաները, այն է՝ թվաբանությունը, երկրաչափությունը, աստղաբաշխությունը և երաժշտությունը։ Դրանց տիրապետելուց հետո պետք է սովորել քերականություն, հռետորական արվեստ, փիլիսոփայություն և այլ գիտություններ։

Շարադրելով ուսուցման իր ծրագրի հիմնական բովանդակությունը, Մագիստրոսը գրում է. «Նախ պարտ է զքերականութիւնն հանդերձ թարգմանութեամբն ուսանել տիրապէս մակստացականութեամբ, և զկնի այսր զՀռետորականն երիւք հանդիսիւք անսխալ տրոհութեամբ, և ապա զսահմանացն պարունակել, և պղատոնական և արիստոտէլական, և դարձեալ պիւթագորական կարակնակերտութեանն բացորոշմանց և դատողութեանց։ Նախուստ քան զայսոսիկ կրթեցելովք ներկուս վերծանութեամբ զհին և զնոր կտակարանս, և առասպելավարժութիւնս ի բազում և զանազան տեղիս զնդեալ զորքանութեամբ արտահայտել հաւանիմք, և ի խոյզ ջերմագոյն և քաջողջական խոհականութեամբ և տրամաբանական հատուածոց հոմերական և պղատոնական նախասականին և այլոցն բոլոր արհեստից և մատենից։ Զի յամենայնի իմաստասէրն խոստովան լիցի զգիտութիւն և ուրացեալ զանգիտութիւն, մանաւանդ ըստ կարողութեան քառիցն արհեստից՝ թուական, երաժշտական, երկրաչափական, աստեղաբաշխական» (էջ 105)։

Փիլիսոփայական-բնագիտական իմացություն ձեռք բերելու և ընդլայնելու խնդրում Մագիստրոսը մեծ տեղ էր տալիս Արիստոտելի, Պլատոնի, Փիլոնի, Դավիթ Անհաղթի, Անանիա Շիրակացու, Պյութագորասի և այլոց աշխատությունների ուսումնասիրությանը։ Խրախուսելով Շիրակացու աշխա-

տանքների բաղմացման գործը, նա գրում է, թե նրանցում «ենթակայացեալ են ոչ միայն քառիցն արհեստք, այլ բոլոր էակացն խոկմունս» (էջ 8)։

Միջնադարյան մտավորականը գտնում էր, որ փիլիսոփայական-բնագիտական գիտելիքները պետք է հիմք ծառայեն աստվածաբանությունը հասկանալու համար։ «Քանզի պարտ է,— գրում էր նա,— նախ ի բնաբանականէն յուսումնականն ամբառնալ և անդուստ աստուածաբանականն» (էջ 8)։ Մագիստրոսը աստվածաբանություն հասկանալու գործում մեծ տեղ էր հատկացնում հատկապես մաթեմատիկական (ուսումնական) գիտելիքներին։ Իր այդ միտքը նա ընդգծել է վկայակոչելով Պլատոնին. «Պղատոն իսկ ոգուշացուցանէ այսպէս· յիւրումն աստուածաբանութեանն. անեղկրաչափական ոք մի ներամտեսցի» (էջ 8—9)։ Մագիստրոսը մաթեմատիկական գիտելիքների մեջ տեսնում էր աբստրակտ մտածողություն ձեռք բերելու հնարավորություն, առանց որի չի կարելի հասկանալ ու ըմբռնել աստվածաբանական դրույթները։ Այս միտքը նա անմիջականորեն ժառանգել է Դավիթ Անհաղթից, որը, տեսական գիտելիքները բաժանելով երեք մասերի՝ «բնաբանականի», «ուսումնականի» և «աստվածաբանականի», գտնում էր, թե «ուսումնականը» միջին տեղ է գրավում բնաբանականի և աստվածաբանականի միջև։ Դավիթ Անհաղթը գրում է. «Բնաբանականն կահաւորի վասն այնոցիկ, որք ենթակայութեամբք և մակամտածութեամբք նիւթաւորք գոն։ Իսկ ուսումնականն կահաւորի վասն այնոցիկ, որք ենթակայութեամբ նիւթաւորք գոն, իսկ մակամտածութեամբ աննիւթք։ Իսկ աստուածաբանականն՝ վասն որք ենթակայութեամբք և մակամտածութեամբք աննիւթք»[5]։ Կատարելով նման բաժանում, Դավիթը եզրակացնում է, թե «ուսումնականն զմիջինն ընկալաւ դասաւորութիւն, այսինքն ի մէջ բնաբանականին և աստուածաբանականին, որպէս երկոցունց հաղորդ, վասն զի և նիւթաւոր է, որպէս բնաբանականն, և աննիւթ՝ որպէս աստուածաբանականն»[6]։

Այսպիսով, մաթեմատիկական գիտելիքները, որոնք վերաբերում են իրական ու կոնկրետ առարկաներին, ձեռք են բերվում բանականության միջոցով, աբստրակտ մտածողության արդյունք են։ Իրենց այս կողմով նրանք ոչ միայն մոտենում, այլև նման են աստվածաբանական իմացությանը, որն արդեն ամբողջովին և սոսկ մտային-աբստրակտ տեսք ունի, քանի որ նրա առարկան աննյութական լինելով՝ ռեալ, իրական չէ և չի ենթարկվում ու չի դյարող ենթարկվել զգայական ընկալման։ Մաթեմատիկական իմացությունը, վերը նշված հատկանիշի շնորհիվ, նախապայման է հանդիսանում և հող է նախապատրաստում մտածողության համար, ինչպես Մագիստրոսն է ասում՝ ընտելացնում է միտքը «ղանմարմին բնութեանն», կոնկրետ-առարկայականից կտրված՝ աստվածաբանական իմացությանը հասու լինելու։ «Եւ ահա,— գրում է նա,— յիրաւի ուրեմն ասացեալն, եթէ որք ի բնաբանականէն յաստուածաբանականն ամբառնան, ըստ այնոցիկ հաւանիմք գոլ» (էջ 114)։ Հակառակ պարագայում, այսինքն՝ եթե մարդ չունի բնաբանական և մաթեմատիկական գիտելիքներ, ապա, երբ նա ցանկանա իմացություն ձեռք բերել աստվածաբանության բնագավառում, կգտնվի երկար խավարում ապրելուց հետո արևին նայել ցանկացող մարդու վիճակում։ «Որք յաղջամղջին տեղւոջ ելով՝ Լ. ի խաւարչտին այն ինչ յարեգակն հայել ձեռնարկեն, ի նոյն ժամուն կուրանան»,— գրում է Մագիստրոսը (էջ 114)։

---

[5] Դավիթ Անհաղթ, Սահմանք իմաստասիրութեան, Երևան, 1960, էջ 122։
[6] Նույն տեղում, էջ 124։

Համաձայնելով Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» նշանավոր երկում արտահայտված մտքին, Գրիգոր Պահլավունին պաշտպանում է այն տեսակետը, թե մաթեմատիկական գիտելիքները հիմնականում «տրամախոհութեան» արգասիքն են։ Ճիշտ է, մաթեմատիկական գիտելիքները աննյութական գոյի մասին չեն, սակայն նրանք, ի վերջո, աննյութական են «զանմարմին բնութիւն» են և գոյություն ունեն միայն մտքում։ Մինչդեռ բնաբանական գիտելիքները և՛ նյութական են իրենց ծագումով, և՛ նյութական բովանդակություն ունեն, որովհետև տվյալ դեպքում «միտք պարզաբար ընկալումն գոյից է»,— գրում է Մագիստրոսը (էջ 115)։

Մագիստրոսի մոտ նշմարվում է գիտելիքների ու մտածողության պատմական զարգացման պրոցեսի ըմբռնում՝ զգայական պարզ ճանաչողությունից դեպի աբստրակտ իմացություն։ Այս պրոցեսի ըմբռնումը դրսևորվել է ոչ միայն վերը շարադրված հարցերում, այլ նաև կրոնի, աստվածաբանության ու առասպելների մասին նրա հայացքներում։ Իբրահիմ ամիրային գրած նամակում, օրինակ, պատմելով կրոնական հին պատկերացումների մասին նա նշում է, որ դրանք եղել են հիմնականում պատկերացումներ նյութական կոնկրետ, առանձին երևույթների ու իրերի մասին, որտեղ դեռ չկա ընդհանուրի գաղափարը։ Այս իմաստով, նա քրիստոնեությունը կրոնի ավելի բարձր աստիճան է համարում, որում արդեն բոլոր եզակիները սկիզբ են դիտվում մեկ ընդհանուրից, ոչ նյութական, ոգեղեն մի էակից։ Այս վերջինս չի պատկերացվում այլևս որպես որոշակի հատկանիշներ ունեցող մի բան, չի բնութագրվում իրական բնությանը հատուկ որակումներով, օրինակ՝ քանակով, չափով, ձևով, ժամանակի ու տարածության մեջ լինելով և այլն և այլն։ Միակության, կատարելության ու համապարփակության աբստրակտ գաղափարը Մագիստրոսը բարձր ու կատարյալ է համարում և դիտում է որպես մարդկային մտքի զարգացման արդյունք։ Այսպիսով, միջնադարյան մտավորականի մոտ, թեև կրոնական թաղանթով, դրսևորվել է զգայական կոնկրետ ճանաչողությունից դեպի ռացիոնալ, ավելի բարձր ճանաչողությանն անցնելու պատմական պրոցեսի ըմբռնում, որը մեթոդոլոգիական արժեք ունի՝ ընդհանրացված ձևով արտահայտելով գիտական այն ճշմարիտ գաղափարը, թե մարդկային իմացությունը սկսվել է կոնկրետ-առարկայական եզակի երևույթների ճանաչողությունից ու աստիճանաբար հասել է ընդհանուրի ըմբռնմանը։

Գիտելիքները, գոյի մասին՝ մեր կարծիքներն ու տեսակետները, ըստ Մագիստրոսի, ձեռք են բերվում երեք եղանակով՝ «տրամախոհութեամբ և տեսութեամբ և ի լրոյ» (էջ 71), այսինքն՝ դատողությամբ, դիտողականությամբ և լսելով։ Նկատի ունենալով, որ վերջին երկու եղանակները՝ դիտողականությունն ու լսելը վերաբերում են զգայական ճանաչողությանը, պետք է եզրակացնել, որ ըստ Մագիստրոսի, իմացությունը բանականությամբ ու զգայություններով է տրվում։ Ճանաչողությունն ինքնին, ասում է նա, բարդ ու դժվարին պրոցես է, այն միանգամից չի իրագործվում։ Իրերի ու երևույթների իսկական հատկանիշներին ու որակին, նրանց բուն էությանը մարդը հասու է լինում հաղթահարելով բազմաթիվ սխալներ։ Գիտելիքներ ձեռք բերելու երեք եղանակներն էլ, գրում է միջնադարյան փիլիսոփան, «դժուարագատ են, «քանզի տրամախոհիմք երբեմն վասն ուրուք՝ ոչ ստուգաբար, և տեսանեմք որակութիւն՝ և ոչ-ըստ ձևոյն, և լսեմք՝ և ոչ ճշմարտէ» (էջ 71)։ Այս պատճառով անհրաժեշտ է, ասում է նա, որ բազմիցս քննենք իրերի բնությունը և

ճշգրտենք նրանց վերաբերյալ մեր ստքերը, դատողություններն ու ձևակերպումները։

Զգտելով ճանաչել իրերն ու երևույթները, մարդն իր առաջ, ասում է Մագիստրոսը, նպատակ է դնում իմանալ, թե ինչի՞ց են նրանք առաջացել, ի՞նչ են նրանք ու ի՞նչ պետք է լինեն։ Սրան համապատասխան մեր իմացությունը իրերի ու երևույթների մասին յուրաքանչյուր կոնկրետ պարագայում բովանդակում է երեք հիմնական հարցի պատասխան՝ «ուստի՞ բանն, կամ յորմէ՞ բանն, կամ առ ո՞ր բանն» (էջ 71)։

Մագիստրոս գիտնականի մոտ տարակուսանք չի առաջացրել իրական այս աշխարհի նյութական բաղադրություն ունենալու հարցը։ Աշխարհի բազմազանությունը նյութի փոփոխության արդյունք է և այդ փոփոխության շնորհիվ է, որ գոյություն ունի կենդանական ու բուսական աշխարհը։ Կերակուրն, օրինակ, գրում է նա Կիրակոս հույն դպիրին ուղղած նամակում, բազմաթիվ փոփոխություններ կրելով մարդու օրգանիզմում, արյան միջոցով տարածվում է մարմնի բոլոր մասերը, բոլոր օրգանները և օժտում նրանց համապատասխան «զօրութեամբ»։ Պարտեզի միևնույն հողից և ջրից սնվելով, նրա բազմաթիվ ծառատեսակները «զիւրաքանչիւր պտուղս անշփոթ միմեանց և անյեղափոխ յառաջ բերէ բնութեանն զօրութիւն։ Այսպէս և զբոյսս և զամենայն արմատիս ի միում տեղւոջ» (էջ 113—114)։ Ուրեմն բնության բազմազանության, նրա գոյության ու հարատևության պատճառը նյութի որակական փոփոխության մեջ է թաքնված։ Իհարկե, միջնադարյան փիլիսոփան նյութի փոփոխության այդ ունակությունը արարչի կողմից սահմանված օրինաչափություն է դիտում և ոչ թե ի սկզբանե ու հավերժորեն նյութին ներհատուկ էություն։

Սակայն բնության մեջ տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ նրա դատողությունների արժեքավոր կողմն այն է, որ այստեղ բացակայում է աստծո անմիջական միջամտության աստվածաբանական թեզը։ Նա գրում է, որ «ունի սերմն իւրաքանչիւր անդամոց զբնութիւն և զզօրութիւն, այսպէս և կերակուրն յինքեան զամենայն անդամոցն զօրութիւն ունի և զնմանագոյնսն պատշաճեցուցանէ» (էջ 115)։ Այս դատողության մեջ որոշակիորեն կարելի է տեսնել էնտելեխիայի մասին արիստոտելյան ուսմունքի արտահայտությունը։ Նրանից հետևում է, որ նյութը և որևէ նոր որակի ու ձևի վերածվելու հնարավորությունը միասնություն են կազմում, սերմն իր մեջ ունի ձևական ու բովանդակային նպատակ, նյութն իր մեջ ներքապես ունի որոշակի բան դառնալու հնարավորություն, ընդ որում անցումը կատարվում է այդ հնարավորության սահմաններում, որպես այդ հնարավորության ծավալում ու կազմակերպված դրսևորում, այնպես, որ յուրաքանչյուր դեպքում «զնմանագոյնսն պատշաճեցուցանէ»։

Նյութի և նրա փոփոխության նման ըմբռնման դրսևորում պետք է դիտել նաև Մագիստրոսի հետևյալ միտքը. «Ամենայն բաղկացուցանող զօրութիւն տիրաբար ասացեալ՝ առնու և զօրութիւն և գոյութիւն, քանզի գոյութիւն ի գոլոյն ասի, իսկ գոլն ածանցութիւն իրիք, բաղկացումն ենթադրէ իբրու գոյ, ի գոյէ գտեալ գերաբնաբար» (էջ 20)։ Այստեղ արտահայտված է նաև միջնադարյան փիլիսոփայի իդեալիզմը, որովհետև նա գտնում է, որ նյութի և մի այլ որոշակի բանի վերածվելու նրա մեջ առկա հնարավորությունը գերբնական ծագում ունի՝ «ի գոյէ գտեալ գերաբնաբար»։ Եթե կարելի է առհասարակ խոսել Մագիստրոսի մատերիալիզմի մասին, ապա պետք է ասել, որ այն ունի սահմանափակ բնույթ և վերաբերում է բնության իրերի ու երևույթ-

ների հետ կապված որոշ պրոցեսների բացատրությանը։ Նրա աշխարհայացքն ընդհանրապես ունի նաև մետաֆիզիկական բնույթ, որովհետև նա բնության մեջ չի տեսնում նոր, նախկինում չեղած որակի առաջացում։ Ինչպես մենք վերը ցույց տվեցինք, նա գտնում էր, որ սաղմի մեջ, նյութի մեջ քանակապես փոքրացված ձևով առկա է այն նոր որակը, որը պետք է համապատասխան պայմաններում ակնհայտ դառնա ու դրսևորվի։

Ամփոփելով Գրիգոր Մագիստրոսի մասին վերը շարադրված նյութը՝ պետք է ասել, որ նրա տեղն ու դերը հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ այն է, որ մեծ տեղ տալով «արտաքին», ոչ աստվածաբանական գիտելիքներին, պահանջ առաջադրելով յուրացնել ու մասսայականացնել այդ ասպարեզում ձեռք բերված ինչպես ազգային, այնպես էլ այլ ժողովուրդների անցյալի նվաճումները, Մագիստրոսն իր անձնական պրակտիկ կուլտուրալուսավորական գործունեությամբ, ժամանակի բազմաթիվ անձանց հղված նամակներով, թարգմանություններով ու ուսումնական ծրագրերով և, վերջապես, առաջադրած ու պաշտպանած իր հայացքներով սկիզբ դրեց ու ճանապարհ հարթեց զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի հայ փիլիսոփայական մտքի հետագա առաջխաղացման համար։

ГРИГОР МАГИСТРОС КАК ФИЛОСОФ

Доктор филос. наук Г. А. ГРИГОРЯН

(Резюме)

Григор Магистрос (990—1059)— один из тех редких представителей армянской философской мысли средневековья, которые, будучи учеными, оставившими письменное наследие, не принадлежали к духовному сословию. В его литературном наследии большое место занимают письма, адресованные примерно 40 лицам, занимавшим различное положение в обществе. Заслугой Магистроса является то, что он проявлял положительное отношение к науке и культуре греко-эллинистического мира, стремился возбудить интерес к ним и включить их в программу обучения, призывал поднять на должную высоту изучение культуры Армении предыдущего периода, в частности трудов Давида Непобедимого и Анании Ширакаци, расчищая этим дорогу для дальнейшего развития относительно освобожденных от религии знаний. Он является как бы связующим звеном между научно-философской мыслью раннефеодальной эпохи и эпохи развитого феодализма. Значительна роль Магистроса в области распространения в Армении науки и просвещения; он не только призывал общественных деятелей своего времени не жалеть средств для создания школ, но и сам развернул практическую деятельность в этом направлении. В статье освещаются основные черты философских воззрений Магистроса. Философ защищает и обосновывает идею о том, что познание—постепенный процесс, развивающийся от конкретно-чувственного к абстрактному как к более высокой ступени. Решая основной вопрос философии с позиции идеализма, он тем не менее старается объяснить явления природы закономерностями самой материи и ратует за развитие естествознания.